թիւն ընդ տանուտէրամբ հանդերձ ըստ Օրինաց հայաստանեաց, հրամայել 'ի վերայ ամենայն ընութեան մարդոյ 'ի յերեսս երկրին հայաստանեաց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն հայոց յամսեանն դեկտեմբերի 20. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Միքայել իշխան, ○
Մանուէլ Գծագիր. ○

Իշխանութեամբն ամենայն հայոց Հայրապետաց, Մաղաքիայ ○

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս, Երկրորդ տանուտէր Հայոց, ○

Վրթանէս կաղնոյ երրորդ տանուտէր Հայոց։ ○

Բացատրութիւն միաբանութեան Հայոց։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Ըստ հատոր չորեքտասաներորդ Օրինաց մտանելով բոլոր ազգն հայոց իւրաքանչիւր երկոտասան հազար տանց երկու փոխանորդիւք, և ըստ հատոր տասնիններորդ Օրինաց իւրաքանչիւր երկու փոխանորդաց մի իշխան տանուտէրութեան, և 'ի հատոր երեսուն և հինգ երրորդ Օրինաց վիճակաւ հանել ի միջէ ամենայն տանուտէրանց այր մի Հայրախնամ ամենայն հայոց և ծնող իշխանութեան վասն տանն հայաստա-